ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Լոռու մարզի Վանաձորի
Վ.Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց
պետական ոչ առևտրային կազմակերպություն

REPUBLIC OF ARMENIA
Region of Lori, Vanadzor
School №25 named after V.Hambardzumyan
non commercial state organization

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ, г. ВАНАДЗОР, ШКОЛА №25 ИМ. В. АМБАРЦУМЯНА
Государственная неторговая организация

Հասցե՝ Վ.Համբարձումյանի 2
Адрес: ул. В Амбарцумяна 2
Address: 2 Str. V.Hambardzumyan
☎ (+374 322) 5-06-92
E – mail: vanadzor25@schools.am

«Ղահրաման» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Մ. Հասանյանին

«25 »մայիսի 2022թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման»ՍՊԸ-ի/այսուհետ՝ Ընկերություն/ միջև «10» հունվարի 2022թ կնքվել է Վ25Դ-ԳՀԱՊՁԲ-22/1-4 ծածկագրով գնման պայանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/: Տարեսկզբից «Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից շաբաթական կտրվածքով ներկայացվել են ապրանքի մատակարարման հայտեր, որոնք մատակարարվել են թերի կամ անպատշաճ որակի / պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք/ կամ ընդհանրապես չեն մատակարարվել: Սակայն Պայմանագրի 5-րդ չափաբաժնի/բուսական յուղ/, 6-րդ չափաբաժնի / դեղին ոլոռ/, 8-րդ չափաբաժնի /հատիկ լոբի/, 9-րդ չափաբաժնի /պանիր/ և 13-րդ չափաբաժնի / տոմատի մածուկ/ մասով Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը չի փոխարինվել և հանձնվել է հայտով ներկայացվածից պակաս քանակի ապրանք կամ ընդհանրապես չի մատակարարվել: «Ղահրաման» ՍՊԸ-ի այս վարքագիծը էականորեն ազդում է դպրոցի բնականոն աշխատանքի վրա: 2022թ մայիս ամսին ընկերությունը ընդհանրապես չի պատասխանել հեռախոսազանգերին և ոչ մի սնունդ չի մատակարարել , որի պատճառով խախտվել է սննդի կազմակերպման գործընթացը:

«Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ոչ ժամանակին և անորակ սնունդ մատակարարելու պատճառով միակողմանի լուծում է «Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ -ի միջև «10» հունվարի 2022թ կնքված Վ25Դ-ԳՀԱՊՁԲ-22/1-4 ծածկագրով գնման պայմանագիրը:

Վանաձորի Վ.Համբարձումյանի անվան
թիվ 25 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի տնօրեն Մ.Ղազումյան